

ՏԵՂԱՅԻՆ ՍԵՄԻՆԱՐՆԵՐ

- ✓ 2016թ. հուլիսի 1-2-ը ՀՀ ԱՎԾ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել է ք. Դիլիջանում կայացած «Երեխայի սեռի խտրական ընտրության դեմ պայքարի քարոզչական գործիքների արդյունավետությունը» խորագրով աշխատաժողովին,
- ✓ 2016թ. հուլիսի 13-ին ՀՀ ԱՎԾ աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Երեխայի իրավունքների մշտադիտարկման (ԵԻՄ) ռազմավարության և գործոխությունների պլանի մշակում» ծրագրի շրջանակում «Երեխայի իրավունքների մոնիտորինգի խնդիրները Հայաստանում» և «Երեխայի իրավունքների պաշտպանության մոնիտորինգի համակարգի արդիականացման խնդիրներն ու քայլերը» խորագրով զեկույցների կլոր սեղանին,
- ✓ 2016թ. հուլիսի 19-ին ՀՀ ԱՎԾ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Մշակութային ինքնարտահայտման ձևերի բազմազանության պաշտպանության և խրախուսման մասին» ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2005թ. կոնվենցիայի կիրարկման զեկույցի վերաբերյալ «Մշակութային ինքնարտահայտման ձևերի բազմազանության պաշտպանության և խրախուսման մասին» կոնվենցիայի պարբերական զեկույցը մշակող միջգերատեսչական հանձնաժողովի աշխատանքային խմբի նիստին,
- ✓ 2016թ. հուլիսի 19-ին ՀՀ ԱՎԾ բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի պետ Վ. Արևշատյանը մասնակցել է ք. Երևանում կայացած ՓՄՁ ոլորտում սկզբնական տեղեկատվության հավաքագրման և վերլուծական զեկույցի և ՓՄՁ ոլորտի վիճակագրության ամբողջական հաշվետվության վերաբերյալ աշխատանքային խմբի անդրանիկ հանդիպմանը,
- ✓ 2016թ. հուլիսի 19-ին ՀՀ ԱՎԾ տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ. Մարտիրոսովան մասնակցել է ք. Երևանում կայացած «Սնուցման նկատմամբ ավելի զգայուն սոցիալական պաշտպանության համակարգեր» թեմայով դասախոսությանը,
- ✓ 2016թ. հուլիսի 29-31-ը ՀՀ ԱՎԾ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել է ք. Ծաղկաձորում կայացած ՀՀ-ում Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի հարցերով խորհրդի աշխատանքային խմբի արտագնա նիստին,

- ✓ 2016թ. օգոստոսի 11-ին ՀՀ ՎՊԽ անդամ Յու. Պողոսյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «ՄԱԿ ԿՓՇԿ ներքո Հայաստանի 4-րդ ազգային հաղորդագրության և Երկամյա առաջընթացի 2-րդ զեկույցի պատրաստում» ՄԱԶԾ-ԳԷՖ Ծրագրի համաձայնեցման տեղական կոմիտեի նիստ,

- ✓ 2016թ. օգոստոսի 12-ին ՀՀ ԱՎԾ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմի կոնվենցիայի իրականացման միջգերատեսչական հանձնաժողովի նիստին,

- ✓ 2016թ. օգոստոսի 12-ին ՀՀ ԱՎԾ ԳՀՀ վարչության պետ Վ. Գևորգյանը, նույն վարչության տվյալների մշակման և դասակարգումների բաժնի պետ Գ. Խաչատրյանը, ՀՀ ԱՎԾ գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Ա. Ավագյանը, վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Ն. Մուշեղյանը մասնակցել են ք. Երևանում տեսակոնֆերանսի միջոցով կայացած ԱՄՆ գյուղդեպարտամենտի փորձագետների և Համատարած հաշվառման տեղեկատվության տարածման ռազմավարության նախագծի մշակման նպատակով ստեղծված ՀՀ ԱՎԾ աշխատանքային խմբի միջև հանդիպմանը,

- ✓ 2016թ. օգոստոսի 12-ին ՀՀ ԱՎԾ ներքին աուդիտի վարչության պետ Ա. Մանադյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «ՀՀ-ում պետական ներքին ֆինանսական հսկողության կարգավորիչ և ինստիտուցիոնալ շրջանակի ուժեղացման և նոր համակարգի գործարկման հարցում Կենտրոնական ներդաշնակեցման միավորին օժանդակություն» ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի փակման միջոցառմանը,

- ✓ 2016թ. օգոստոսի 31-ին ՀՀ ՎՊԽ անդամ Յու. Պողոսյանը և ՀՀ ԱՎԾ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Ն. Մանդայանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Հայաստանի հարմարվողականության ազգային պլանի (ՀԱՊ) պատրաստում» թեմայով աշխատաժողովին: